ՏԱՐԱԶԸ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՇԱԲԱԹԸ ՄԻ ԱՆԳԱՄ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

№ 43 կիրակի Նոյեմբերի 19 | վեցերորդ տարի 1895

ԱՂԲԻՒՐ ԵՒ ՏԱՐԱԶ

Աղբիւրը լր՞ մատաղ ընթերցողների սրտերում ցանում է դիմութեան, ինքնաճանաչութեան, անվեհերութեան սերմեր։

Աղբիւրը ձգտում է առաջադիմութեան ուղիղ ճանապարհով ընթացող, առաքինութեամբ օժտուած, գիտութեան անշէջ լուսով զարգացած, հայրենասիրութեամբ, եղբայրսիրութեամբ բորբոքուած, հայ հասարակութեան համար մատաղ անդամներ սնուցանել։

Տարազը Աղբիւրի արդէն հասունացած սաների օրգանն է, նրանց վշտի, խնդակցութեան արտայայտիչը, նրանց մտքերի, զգացմունների թարգմանը։

Տարազը Աղբիւրի նախկին սաների ապաստարանն է, նրանց մտքերի ժողովարանը, նրանց մրցումնքների, ցանկութիւնների իրագործման տեղը։

Այսօր Հաղարաւոր Հայ մայրեր, բիւր երիտասարդներ կան, որոնք իրանց ամենագաղտը մանկական ժամերը նուիրած են եղել Աղբիւրին, նրա մէջ գտնելով իրանց ուրախութեան ընկեր, վշտի սիրելիանք։

Աղբիւրի այդ սաները այսօր և կազմում են թէ ու թիւնք մեր դպրոցին, նրա բարոյական զարգացման, կանոնաւոր առաջադիմութեան նախանձախնդիրները։

Աղբիւրն ու Տարազը այսուհետև էլ պիտի ընթանան իրանց ընկ միշտ բնած ուղիով, բարին և գեղեցիկը նպատակ, արդարութիւնն ու ճշմարտութիւնը գործավիզ ունենալով։

Մեր գործը հրապարակի վրայ է, մենք չենք կամենում լուսքեղով պերճախօս լինել, առատ լուսաւորներով գրաւել հայ ընթերցողի ուշադրութիւնը։

Բանալով այսօր Աղբիւր-Տարազի առաջին 1896 թ. բաժանորդագրութիւնը, մենք յոյս ենք տածում, որ մեր մշտական ընթերցողները կաջակցեն Աղբիւր-Տարազի բարգաւաճման։

ԴԷՊԻ ԱՆԻ

(Տպատորութիւններ)

ԱՌ ԻՏԱԼԻԱ

„Հայրենիքդ իմ, այս մեր նախնեաց, ահա պարիսպ, կամարներ,
Եւ ամայի աշտարակներ, և այս կոթող արձաններ,
Բայց փառքն ո՛ւր են, չեմ տեսնում...“
Լէոփարդի

«Անի քաղաք» անունը յիշում եմ իմ մանկութիւնից, այն ժամանակից, երբ իմ անունն եմ իմացել. արժանայիշատակ Ա. վ. Աբարատեանի «Անի քաղաք նստեր կուլայ» երգը մի առանձին հոգեզմայլմամբ եմ երգել 7—9 տարեկան հասակումս, շատ եմ կարդացել, ասելի ևս շատ եմ լսել այդ «քաղաքի» մասին և միշտ երևակայել եմ կախարդած, քարացած, արձանացած... Այդ տպաւորութիւնն են անում «Վէրք Հայաստանի» այն ոգեշունչ տողերը, որ ողբացող Հայրենասէրը նւիրել է Անիին, այդ եղբակցութեանն է գալիս ամեն մի պատահական վառ երևակայութիւնը երանելի Աբովեանի Անին կարդալուց յետոյ... Վաղուց ուխտել էի այցելել Անին, իղձ ունէի նրա սրբազան բեկորները համբուրելու... Իմ այդ բաղձանքը կատարւեց անցեալ ամառ շնորհիւ Թիֆլիսեցի երկու Հայ տուրիստների, որոնք այցելել էին Ջաւախքը և շարունակում էին իրանց ուղին դէպի Անի: Մի բաւական ուսուր խումբ ճանապարհւեցինք:

Ուշադրութեան արժանի՝ առաջին գիւղերը, որոնք պատահում են Ալէքսանդրապոլի ճանապարհին, գուխասրնների Բողդանովկա, Արլովկա, Գարելովկա և Եփրեմովկա կիսապատարիկ գիւղերն են: «Գուխորորիայից» դուրս գալով՝ անցնում ենք այդ լեռներով ընդգրկած սարահարթերով, ալպեան բարձունքով, գեղեցիկ արօտատեղերով և մարգերով, ճոպկոփթիթի դաշտերով, որոնք ուռզուում են յառաջ պատահող թռչուն, անդօր, անմեղ, անմռունչ մանուկ-առւակներով, որոնք լռիկ, մընջիկ ականակիտ և հանդարտիկ, առանց լողոք ու ազմուկի, առանց դժդոհութեան անցնում են փակուած իրանց կատարին ափերում... Երբ մի վոքր տարածութիւն անցնելուց յետոյ՝ անցորդի աչքին է ընկնում չքնաղ Արադածը, այնտեղ, ուր կալծում ևս Թէ Աբուլն ու Արագածը կատարներով ողջունում են իրար, ուր բաժանւում են իրարից Քուի և Երասխի աւազանները, այդ առւակներից շատերը գրկախառնում են նորաբուղխ Ախուրեանի հետ, որը սկզբից անուշ խոխոջով, իսկ յետոյ ահեղամռունչ, «որոտաղոչ բաղխելով կարծր ժայռերի կուրծքը», հասնում է դէպի «Մայր Արաքսի» ծոցը... Իջնում էք դէպի Ձիրակ՝ ընկիկ «Հայաստանի հողը»: Բնութեան տեսարանները սւելի են կենդանանում. կարկաչահոս, արագընթաց, խոխոջիւն, վճիտ առւակները աղմկով են հոսում ժայռերի միջով. իսկ Ձիրակի ամեն կողմում նկատւում են զարծունկութեան և բարօրութեան հարստահ տեսարանները, գեղեցիկ արտեր՝ հայ գիւղացու քրտինքաթոր ճակատի վաստակը, մահկանի բանուկ ձեռի, ուժեղ բազկի արտագրութիւնները...

Ալէքսանդրապոլը՝ իր ծայրահեռութիւններով, իր ճոխ ապարանքներով և հարիւրաւոր՝ բաւի իսկական մտքով՝ անօթի ընտանիքներով, իր կաստայականութիւնով, հասարակական կեանքի բացակայութիւնով, կլասիքական կեղտով, թողով՝ շատ ծանր տպաւորութիւն է անում ճանապարհորդի վրայ: Ո՛չ մի ուրախալի բան չկայ, բացի վառաւոր եկեղեցիներից, որոնցից աւագը Անու մայր եկեղեցու ձեւով է շինւած, և ոչ պակաս վառաւոր զպրոցական շինութիւններից:

Ալէքսանդրապոլի թղած ծանր տպաւորութեան տակ ճանապարհորդական պայուսակները առած՝ վաղ առաւօտեան ոտով ճանապարհւեցինք դէպի Անի: Ախուրեանի աջ կողմն անցնելուց յետոյ մեր պատահած գիւղերից ամենանշանաւորն է պատմական Ձիրաքաւանը կամ Երազգաւորքը, այժմեան Բազ-Ձորագեալը, որը նախ՝ քան Անին, գրեթէ կէս դար, Բագրատունեաց առաջին թագաւորանիստ տեղն էր *). այժմս էլ յայտնի է իր հինաւուրց հռչակաւոր տաճարով: Ձարմանալով ուղին՝ անհանգիստ հայեացքներս անդադար դարձնում էինք դէպի հարաւ-արևելք, ուր յուսով էինք առնել առաջ տեսնել, և մի վոքր դնալուց յետոյ առաջին տեսնողը բացականչեց «Մասիսը, Մասիսը», որին սրձադանք տւին ուղեկիցները սրտերը... Չոյակապ տեսարան... Մեծափառ հսկայի սպիտակափառ և պատկառելի գագաթն էր գա—հին, գարատոր ծերուկու սպիտակ ալիքներով. մոտամբ երևում էր և ծերունի նահապետի կրտսեր եղբայր Փոքր-Մասիսը: Տեսարանը դիւթիչ ներգործութիւն ունեցաւ մեզ վրայ. ճիշտ ուր «քաղցր Մասիս»:

Մասի՛ս... Հոյակապ անուն, մի հսկայ, մի վառաւոր վկայ հայի անցեալ վառքի և թշւառութեան... Հէնց ներկայումս էլ ցցած լինելով պե-

*) «Նշմարք Հայկականք». Տ. Ղ. Վ. Ալիշան։

տալթիւննների սահմաններում՝ կարծես բաժանում, սքողում է մի կողմից տանջանքը, լացը, արտօսրը, տաղտակը, իսկ միւս կողմից անտարբերութիւնը...

«Ինչպէս ուժեղ է ձայների աղերսութիւնը», ասում է Պուշկինը: Արարատը տեսնելով՝ նա կարծում էր թէ տեսնում է և՛ տապանը՝ կեանքի վերանորոգութեան լուսով կանգնած այդ բիբլիական լերան պլիսին, և տապանից դուրս թռած աղաւնին և ապաստանն, այդ մէկը միւսին հակառակ սիմբոլներին... *)

Բայց այդ տարբը լիսաը մեզ համար իսկ բիբլիական Արարատ չէ, այլ և Փասիս, որի շուրջը ճաշակել է հայկական կուլտուրան, որի տորթաններում այնքան մոռացել և դղացել են ահէդարի հնչակատարի կրիֆիչները, Փասիս, որը իր սրտում կրելով հսկայ տապարին՝ մի հսկայ պահնորդ է Հայաստան աշխարհի, մի վհեմ կոթող... Բայց այդ բոլորից՝ Փասիսը հէնց իր արտաքին տեսքով խոր և անբացատրելի տպաւորութիւն է տնում բնութեան դեղեցկութիւններից ըմբռնող ամեն մի անհատի վրայ: Ահա ինչ է տում ճանապարհորդ Մոլիէն. «Արտ-Արտի դաշտը անցնելուց յետոյ բացւեց Արարատի դեղեցիկ տեսարանը, որը մեծ բուսականութիւն պատճառեց մեզ: Նրա ձևից տեղի դեղեցիկ և նրա հսկայական մեծութիւնից տեղի զարմանալի բան չկայ. շրջակայ սարերը՝ նրա հետ համեմատած՝ կարծես անհետանում են աչքից. նրա տեսքը կատարելագործումն է ամեն տեսակէտից. ոչ մի կոպիտ գիծ, ոչ մի անբնական անհարթութիւն. ամեն տեղ ներդաշնակութիւն, և այդ բոլորը, ըստ երևոյթին, միացել են, որպէսզի պատկերացնեն բնութեան ամենավեհ երևոյթներից մէկը:» — Այդ հսկայ կոնուսի գագաթից մի քիչ ցած շատ ակօսներ են իջնում, որ այնքան դեղեցկացնում են տեսարանը. կարծում էք թէ սև ֆոնի վրայ ոսկեայ օձիքի ծալքեր են ընկած վիթխարի մարդու ուսերի վրայ, որի գլուխը կարծես ամպերի մէջ ծածկուած մրցում է երկնքի հետ կամ համբոյր է տալիս նրան...

Այդպէս մարդ կարծում է թէ մեր Փասիսն երկիրը երկնքի հետ կապոյ, միացնող մի օղակ է...

Հսկայի վրայ նկատելի են և սահմանագիծ լեռները: Նրանք կարծես կանգնած են որ մեր աչքերից ծածկեն այն դիւային անդթութիւնները, որոնց զոհ է մեր եղբայրը... Աշխատում եմ հայեացքս թափանցել լեռների այն կողմը, այդ մշտական ջարդբանքի ու կոծի աշխարհը, տեսնել այն կատարածները, այն հիւազային չարչարանքը,...

Երբ շարունակելով ճանապարհը հասնում ենք Արագ գիւղին, որի մօտ կանգնած է Կաթողիկոսանքը, իսկ յետոյ Երեք-Եկեղեցը, երևում են վերջապէս և հայկական Պալմիրի գոտոյ պատկերը: Ճիշտ որ «այլանդակ կարաւան մը, անապատի մէջ կանգ առած, գաղրած, և... խսկոմ գաղրած...», ինչպէս ասում է «արծիւն Ալիշան»: Յաղնած ճանապարհորդը հեռւից երկար նայում է հայկական աւերակների և հսկայ լերան վրայ... Տպաւորութիւնը զօրեղ է և կրթիչ... Փասիսը և Անին մի ամրողջ պատմութիւն են... Ջնտպեցինք մնացած տարածութիւնը շուտով անցնելու, որպէս զի կարողանանք դեռ չմթնած մուտք գործել խնկելի քաղաքը և չըղկւել առաջին ուժեղ տպաւորութիւնից. սակայն մեզ անվերջ էր թւում այդ տարածութիւնը: Գնդապարոնին չըհասած պատահեցանք հայկեան մի անշուք աւերակի, որ ինչպէս ասում են՝ «Հովիւ և հերձեցին» է: Հաղիւ-հաղ մթնաշաղին հասանք գլխաւոր դռան, որը կարծես հանձարել Գանտէի բերանով մեզ ասում էր.

«Ես լաց ու ողբի քաղաքի դուռն եմ,
Ես անվերջ ողբին դիսող շաւիղն եմ,
Ես անդարձ կորած անդրնդի անցքն եմ,
Դուք այցելուներ, կարէք ձեր յոյսը...»)

(Կըշարունակելի)

ՊԱՆԴՈՒԽՏԻ ՅԻՉԱՏԱԿԱՐԱՆԻՑ



Ա՛ռաւօտու գեղիւռն էլ չէր հալրենի.—
Նա անցել էր այն օրից՝ երբ ես թողի
Հայրենիքիս պարզ երկինքն ու լաւ օրերը,
Հիմա փչում են հիւսիսի պաղ քամիները...
Դժւար է ինձ...
Ես չիշեցի գեղիւռը իմ հայրենիքիս,
Որը լուիկ անցաւ սրտիցս անհանգիստ,
Որ թւում է՝ դեռ խօսում է աւուսկի հետ՝
Խորհրդաւոր շշունջներով հազարումէկ...
Հիմա լսում եմ անդուլ քամու շառաչիւնը

---

*) Пушкинъ. «Путешествіе въ Эрзерумъ».

*) Թարգմ. Գր. Տէր-Պօղ.

Ի. ԱՊԱՆ. ՏԱՃԿԻ ԿԱՄԱՎՈՐ ԸՆԿԵՐՔ ՊԱՀԱՐ

Նրա ձեռն ու սպառնալիք և միշտ կրկին
Ամեն-մի-մեկ արձագանքող պարզ ձայնի մէջ,
Հայրենիքիս տխուր երգն է հնչում անվերջ՝
Հայուհու եղանակները վիշերային...
Առաւօտու թռչնոց երգերն էլ այն չէին,
Արդեօք պրեց իմ սոխակիս խօսող լեզուին,
Եւ ծիծառը պանդխտացած՝ շուտ, մոլոր,
Ճուռղում է մի ինչ տխուր ու անտուր...
Եւ կեանքը ինձ, հա, թւում է շատ փոխուած,
Ձրիան հիմա բարեկամներ շրջապատած;
Ո՛չ էլ ձայնը ազնուկ հանող անասունին,
Ո՛չ էլ սայլը լեռնահնչիւն իմ սրնգի...
Առաւօտու զեփիւռն էլ չէր հայրենի,
Նա անցել էր այն օրից, երբ ես թողի
Արտասուի լայնատարած թիլիտներդ,
Երբ հեռացայ Արփիաչայի ափերից.—
Այն օրից յետ չբմռնացայ իմ հայրենին,
Ես դեռ տղայ՝ անուշել էր ինձ մայրաբար,
Եւ ես հիմա յիշում եմ... և զառնագին
Տաղտապում եմ, լաց եմ լինում նրա համար.
Հայրենիքիս տխուր երգի հնչիւնները
Թիշեր-ցերեկ, ո՛, չեն սպրիս ինձի զաղար...

ՅՈՎՀ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ.

գիտություն

ԳՈՅՈՒԹԵԱՆ ԿՈՒԻ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

(Կարդացած 1895 թւի ապրիլի 23-ին կայմած մի երեկոյթին)

I

Փարիզեան կղզիների վրայ ապրող վայրենի ցեղերի թագաւորը արդէն ծերացած մարդ էր: Իր անգամ քարքը սուսմ է թագաւորին. «Եթէ ծերութիւնը և քեզ մուշոյ հիւանդութիւնները սպառնում են լռնալուհեցնել ձակատդ—պինդորի մէս կիր. նրա այժը, ճկունութիւնը և քաջ հոգին կրտեղաւիսեն քո մարմնի մէջ»: Եւ կամենալով օգտուել իր պինդորի քաջութիւնից և այժով, կամենալով թարմացնել իր լեմֆոյով թանձրացած արիւնը, թագաւորը կերաւ իր պինդորին, մի մեծ կեղեւի ամանի մէջ աւաջը պրած:

Ահա այն գոյութեան կռիւը, որը երբեւ միակ կողմնացոյց զեկավարում է մարդկանց գործերը: Թագաւորը կերաւ պինդորին, այդ շատ բնական բան է, նոյնն են անում և այդ թագաւորի հպատակները: Աւստրալիայի մայր ցամաքի վրայ ապրում են բազմաթիւ վայրենի ցեղեր, առհասարակ միմեանց թշնամի: Երբ մի ցեղ սկսում է բազմանալ և նրա բռնած հողի տարածութիւնը փոքր է թւում, ապրուստի պաշարեղէնը սկսում է քչանալ, այն ժամանակ սովորաբար միտք է ծագում փորձել ոյժերը հարեւան ցեղերի հետ, և եթէ կարելի է, նրանցից որ և է մի կերպ օգուտել: Ահա կազմւում է մի հարպա, և վայրենի խումբը արշաւում է վեպի հարեւան կալւածները: Պատերազմում են հասարակ քարերով, քարեայ կացիններով և նետերով: Պատերազմը վերջացաւ, յաղթական խումբը երկիրն աւարի մատնելուց յետոյ, տանում է բազմաթիւ գերիներ: Այդ գերիները երանոյ անմիջական պաշարն են. հէնց պատերազմի պաշտում յաղթողները մորթատում են նրանց և ագահաբար սկսում են ուտել:

Բայց այս մարդակերութիւնը միայն թշնամիների վերաբերմամբ չէ: Օլֆիշտ *) ասում է որ Աւստրալիայում սովի ժամանակ երեխաներին ուտելը սովորական երեւոյթ է, որի ժամանակ մայրը բարձրանայն չքաղխոյ յայտնել իր վիշտը, ապա թէ ոչ ծեծի կենթարկուի: Նա իրաւունք ունի միայն կամայ հառաչելու: Վիտի կոչւած տեղում մեծ յարդանք էին վայելում այն մարդիկը, որոնք աւելի շատ անգամ էին թաղած իրանց ձեռքերը մարդկային աբեան մէջ **): Այդտեղ մի ցեղի հրամանատար պարծանքով յիշում էր որ ինքը 9 մարդ է կերել, մեծամ, ոչ ոքին մօտ չըթողնելով:

Յատկապէս Աւստրալիայում մարդու միսը մեծ յարգ ունի, մանաւանդ կանանց միսը, որոնք այդտեղ հազիւ է պատահում որ ծերութեան հասակին հասնեն, որովհետեւ մարդիկ վախենում են որ չըլինի թէ նրանք լզարին, հիւանդանան և համեղ միսը կորցնեն իրանք: Այդ բաւական չէ. նրանք զոհերին խեղդում են փայտից շինած լծակով, որպէս զի արիւնը չըկորչի, որ նրանք լսում են մեծ ախորժակով: Վայրենին ուտում է իր կնոջն էլ, իր շանն էլ, և վերջինիս աւելի ափսոսանքով է յիշում քան իր կնոջը, որովհետեւ կեանքի մէջ պատահել են դէպքեր երբ շանն աւելի մեծ ծառայութիւն է մատուցել նրան ***):

Նոր զելանդացին ամենահանգիստ լռզեով ասում էր ճանապարհորդ Քուքէնին. «Ինչու՞ չուտել մարդկանց: Քեզ ձուկը ուտում է փոքր ձկան, փոքրերը ուտում են զանազան մանր կենդանիներ: Թռչուններըը ուտում են միմեանց: Մարդիկ շներ են ուտում, շները—ուտում են մարդկանց: Ինչ մի վատ բան կըլինի, եթէ մենք ուտենք պատերազմի մէջ սպանուած թշնամիներին, որոնք, եթէ կարողանային, նոյն կերպ մեզ հետ կըվարուէին»:

Ինչպէս տեսնում ենք շատ պարզ և անհերքելի լռգիկա է: Ինչ ունէք ասելու որա դէմ: Ձեր խիղճը: Բայց նրանց խիղճը հանգիստ է: Որքան կուզէք

*) Letourneau-L'evolution de lande-ի մէջ յիշատակւած:

**) Դարւին, Происхож. челов.

***) Летурно. Прогрессъ правозвенность.

քարոզեցէք թէ բարոյականութեան, մարդասիրութեան տեսակէտից չի կարելի մարդու մէս ուսել, վայրենին այդ բոլորը ցնորականութիւն կը համարի: Եւ իսկապէս ինչու չէ կարելի ուսել մարդու մէս, երբ մենք այս բոլորին ուսում ենք բնաւանի կենդանիների մէսը մեր գոյութիւնը պահպանելու համար. նոյնը անում է և վայրենին, միայն նրա սեղանը մի տեսակով աւելի հարուստ է:

Ահա ձեզ գոյութեան կռւի սկզբնական ամենապատ և անձնասիրական կողմը: Անձնասիրական ասացի, որովհետև գոյութեան կռւի նպատակն է կեանքը պահպանել, այսինքն ստամոքսի պահանջը լրացնել, որը և վայրենի արուեստագիտութեան ամենապարզ ֆորմոպայով, այսինքն՝ պէտք է ուտել ինչ էլ որ լինի: Ժամանակի զարգացման հետ փոխուեց և ընդարձակուեց շատ բան, ընդարձակուեցին և գոյութեան կռւի սահմանները, մոտիվները, միջոցները, պարզան աւելի բազմակողմանի և նրբ, որոնց մասին մենք դեռ առիթ կունենանք խօսելու: Բայց, ինչպէս ասացի, գոյութեան կռւի սկզբնական և ամենապարզ ձևը իրար անմիջապէս ուսել է:

Նոյն օրէնքն է տիրապետում բուսական և կենդանական աւելի ստոր աշխարհներում:

Այժմ վերցնենք մի ուրիշ պատկեր: Մի կողմ թողնելով զանազան կրօնները, ուր բարոյականութեան հիմքը Հանդերձեալ կեանքի վարձատրութիւնն է, մենք ընդհանուր գծերով նկարագրենք էտիկայի օրէնքները, որը վերջերս սրտին պիտութիւնների շարքն անցաւ:

«Մի սպանիր», ասում է այդ բարոյականութիւնը. ուրեմն կեանքի ամեն դէպքերում, թէ անհատների և թէ ազգերի մէջ սպանութիւնը պէտք է վերանայ, որով և պատերազմներն էլ պէտք է վերջանան: Ամեն անհատ կատարեալ ազատութիւն և տպահովութիւն պէտք է վայելէ, ասում է այդ բարոյականութիւնը: Ուրեմն պէտք է ջնջուի տերութիւնը, որով հազարաւոր մարդիկ մի քանիների համար շարժական կալուածք կամ ստրկի պաշար էին համարում, պէտք է ջնջուի այն կախումը, որը այժմ տիրում է մարդկանց մէջ: Նոյնն և նիւթական օգտի տեղ պէտք է գերակշռէ բարոյական և մտաւոր օգուտը, սովորեցնում է մեզ այդ բարոյականութիւնը. ուրեմն պէտք է կռւի շահասիրութիւնը և մարդիկ պէտք է ձգտեն մտաւորապէս կատարելագործուելու: Այդ բարոյականութիւնը հաստատում է մարդկութեան կատարեալ աղնւացման և նրա ճանապարհն է—յաւիտենական առաջադիմութիւն. նա նպատակ ունի ձեռք բերել ոքան կարելի է շատ և շատ հասարակական և անհատական բախտաւորութիւն, վերացնելով այն ամեն արգելքները, որոնք տանջանք են պատճառում մարդկանց:

Սակրատը թոյն խմեց բանտի մէջ, հաստատելիս մնալով իր սկզբունքներին: Քրիտոնը, խաչի վայ մինչև վերջին շունչ քարոզից նոյն սէրը և մարդասիրութիւնը:

Այժմ ինչպէս մնայնենք իրար հետ այս երկու հակասակաները: Ի՞նչ բան է գոյութեան կռիւը և ինչ է բարոյականութիւնը, և որտեղից ծագեց վերջինս: Ի՞նչ յարաբերութեան մէջ են այդ երկուսը միմեանց հետ:

(Կը շարունակուի)

ՀԵՒԱԳԻՐՆԵՐ

Պետերբուրգ. Նորին Սրճազանութիւն Թագաւոր Կայսեր. Յաւուր տաւաջին տարեդարձի վշտալի մահուան սիրեցեալ Ծնողի Շնորհ Սրճազանի ի ժամ ս. պատարագի և Հոգեհանգստեան՝ գթացմամբ խորին երախտագիտութեան ընդ մխաբանու և ուխտիս վերատւքեայ Ջերմեռանդն աղօթս վասն հանգըստեան մաքուր Հոգւոյ խաղաղասոր Արքայի և վասն երկար խաղաղ Թագաւորութեան Շնորհ Սրճազանի և վասն բարօրութեան Հաւատոյն Օգոստափառ Տանդ:

ՊԿՍՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

20 հոկտեմբ. 1895.

—

Պետերբուրգ. Նորին Սրճազանութիւն Թագաւոր Կայսեր. Ի մեծաւոր տաւսւր տաւաջին տարեդարձի ամբառնալոյ Շնորհ Սրճազանի յաղթաւ նոսիահաղթիդ՝ կատարեցեր Հանդիսաւոր մաղթանս վասն թանկագին կենաց և արեշատութեան Շնորհ Սրճազանի: Ի ժամու տաւսպանաց մերոյ մասին Հօտին խմոյ՝ վերատւքեամ աղօթս ջերմագին յԱթոռ Բարձրելոյն, զի պահպանեսցէ ի կարող զօրութեան գՍրճ Տէրութիւնդ զգաշտպանն քրիստոնէից նեղելոց, և արարչեսցէ սոս բազում ի վառս և յաջախութիւն մարդատէրն Թուսիոյ Շէկ, զթաւսաս Թագաւոր, տաւ Որ յուսով համբառնան զաչս իւրանց բազմաչարչար որդիք եկեղեցւոյն Քրիստոսի:

24 հոկտ. 1895.

—

Նորին Կայսերական Սրճազանութեան պատասխանը

Ցարսկոյէ Սելօ, 24 հոկտ. 1895, 1 ժ. 20. ր. գիշեր կէսաւուր.

Էջմիածին. Պատրիարք Կաթուղիկոսի Ամենայն Հայոց Մկրտչի. Մխիթարեալ ի հոգեպարար սիրտանս աղօթիցդ, վերատւքիդ ի Սբրազգենէ Շերմէ և ի համօրէն միաբանական ուխտէ վանացդ յաւուր տաւաջին տարեդարձի վերջատոփն մահուան անմոռանալի Ծնողին Իմոյ, շնորհակալ եմ ի սիրտ և ի հոգի վասն զգացմանդ Շնորհոյ:

ՆԻԿՈԼԱՅ.

—

Պետերբուրգ. Նորին Սրճազանութիւն Թագուհւոյ Կայսրուհւոյ Մարիա Ֆեօդորովնայի. Ի տիրապին տաւսւր տաւաջին տարեդարձի վարդաժամ մահուան անմոռանալի խաղաղարար Արքայի ընդ համօրէն միաբանական ուխտիս ս. Էջմիածնի, զկնի ս. պատարագի, կատարեցի Հոգեհանգիստ և ջերմագին աղօթիցի վասն հանգստեան մաքուր Հոգւոյ Նորին: Լսելով երկնաւոր թագաւորն խաղաղասիրի

կուպիդոնն ու իր ամուրը

Վերջին երգուհի

ողջյանաց մերոց և հանգուցեալ դհոդի Հօրն խաղաղարարի ի վերայ Ընքայ Որդւոյ Իւրոյ. Ամէն:

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱԲԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ

20 հոկտ. 1895

Նորին Մեծութեան Թագուհի Վնայտորւոյն Մարիա Փէօդորովնայի պատասխանը.

Թաւրէնս. 20 հոկտ. 5 ժ. 7 ր. զկնի կէսաւուր.

Էջմիածին. Կաթողիկոսի Ամենայն Հայոց. Ի հոգի շնորհակալ եմ Սբրութեան Ձերում և Համայն միաբանութեանն Ս. Էջմիածնի յղացած վերաւաքելոյն առ Տէր Աստուած աղօթիս վասն իմ և տաբեդարձի վշտալից վասն իմ և համօրէն Թուսիոյ ուղղ:

ՄԱՐԻԱ

(«Արարատ»)

ԻՐԻՒՆԴԸ ԲԵՄԱԿԱՆ ԱՐԻԵՍՏԻ ՄԱՍԻՆ

Լոնդոնում, Bayal institution-ի մէջ, հռչակաւոր արտիստ Իրւինդը մօտ ժամանակներս մի դասախօսութիւն կարդաց, որի նիւթն էր պարզել այն հարցը՝ թէ որչափ կարող են «ստեղծագործողներ» համարւել թատրոնական աշխատութիւններ կատարողները, դերասանութեան միւս ներկայացուցիչների նման:

«Նախ, ինչ է արւեստը,—հարցնում է դասախօսը:—Հաւի բուն նշանակութեամբ կարելի է արւեստ անւանել բնութեան ոյժերից օգտւելու և նրանց դասաւորելու կարողութիւնը, այնպէս որ, ըստ ցանկութեան, ունենանք այս կամ այն էֆֆէկտը: Մենք կաշխատենք ամփոփել այդ որոշումը և բացատրել, թէ ինչպէս ենք հասկանում «դերարւեստ» տերմինը: Այդ տեսակէտից՝ զանազան տեսակ գեղարւեստական աշխատութիւնները քննելով, Տէնը քայլ առ քայլ դուրս է բերում այն բոլորը, ինչ որ կարող է ծառայել բնորոշիչ նշաններ նրանց համար: Ամենից առաջ աչքի է ընկնում արւեստի նմանողութիւնը, նա մի քայլ անգամ անել չէ կարող առանց բնութեանը հետևելու (նմանելու): Սակայն այդ նմանողութիւնը իր սահմանն ունի.—մենք գեղարւեստական աշխատութիւն չենք համարում՝ լուսանկարները և տպագրական հաշիւները: Գրական կամ նկարչական աշխատութիւնների մէջ մենք պերդարեստագէտից (художникъ) պահանջում ենք պատկերացնել անձանց և անցքերի ոչ թէ չոր, ցամաք արտաքինը, այլ նրանց յարաբերութիւնների և փոխադարձ կապակցութեան մասերութիւնը: Իրական դրութեան մէջ, որը մեզ ծառայել է իբրև նիւթ ստեղծագործութեան համար, մեզ հետաքրքրում է պատասխանութիւնը, կապակցութիւնը, մասերի կապակցութիւնը, մի լուսաբով նիւթին արտաքին լոգիկան, այլ ոչ թէ նրա բոլոր յատկութիւնների մանրամասն պատկերացումը: Այստեղ մենք առաջին անգամն ենք հանդիպում գեղարւեստագէտի գործունէութեան մէջ ստեղծագործական էլէմէնտի հետ—և այստեղ նա արդէն դառնում է ոչ միայն ձեռքի աշխատութիւն, այլ և ընդունակութիւնների մտաւոր (интеллектуальный) երևոյթ: Բայց գնանք աւելի հեռու: Գեղարւեստական աշխատութիւնները ուսումնասիրելով, մենք նրանց մէջ միայն ստրկօրէն պատկերացումը չենք տեսնում նիւթի մէջ եղած յարաբերութեան: Ոչ, շատ յաճախ բնական յարաբերութիւնները գեղարւեստագէտը փոխում է մի որոշ նպատակով: Այդ նպատակը կայանում է նրանում, որ ամփոփ կերպով տանք առարկայի յայտնի գծերը և գլխաւոր իդէան, որը գեղարւեստագէտը ստացաւ նրա մասին: Առարկայի էական գծեր է կոչւում այն յատկութիւնը, որից անփոփոխ ենթադրութեան հանապարհով հետևցնում է բոլոր կամ, գոնէ, նրա ուրիշ շատ յատկութիւնները: Այդ բնորոշիչ նշանը ամեն մի բնական առարկայի սեպհականութիւնն է կազմում, բայց կեանքում եղած ուրիշ պատահական և ոչ էական առարկաների մէջ նա կորած է: Նկատել նրան, զտել, հասկացնել ու զգալ տալ հասարակութեան—ահա ինչի մէջ է կայանում գեղարւեստագէտի ամբողջ խնդիրը: Բայց նրան կատարելու համար նա պէտք է օժտւած լինի առանձին ձիրքով, անկախ ընդունակութեամբ, որը նրան կարողութիւն տար զգալ, լիովին հասկանալու, տեսնելու առարկայի մէջ նրա բնաւորութիւնը, նրա «հոգին», —որոնք հասարակ մարդկանց համար, համարեա, աննկատելի են իրականութեան ողջամտողջի մէջ: Այդպիսի ընդհանուր բնաւորութիւն են կրում տէնի հայեացքները ամեն մի հշմարիտ դիտական աշխատութեան գեղարւեստական ամեն մի պայմանների մասին:

Ոչ ոք, ի հարկէ, չի վիճիլ, որ ակտեօրը օրինակում է կեանքը: Սակայն նրան ներկայացնել բոլոր գծերով նա չէ կարող բեմական մի շարք պայմաններ հնման վրայ: Ուստի նա էլ պէտք է պատկերացնէ իրականութիւնը, այսպէս ասած, նրա յատակագիծը, օգտւելով իրան արւած միջոցներից և աշխատելով ներկայացնել միայն մասերի յարաբերութիւնը: Եւ ակտեօրի, ինչպէս և ամեն մի գեղարւեստագէտի, անկախ ընդունակութիւնները զոում է բոլոր էականը, տիպականը արւած առարկայի համար, ապա նա քաղում է այդ առանձնայատկութիւնները և դարձնում է նրանց հասկանալի հասարակութեան համար: Այդպիսով բեմական գործողութիւնները պէտք է տիպական համարել ոչ միայն գերասանութեան շրջանին ընդհանրապէս, այլ և գեղարւեստին, մասնաւորապէս:

Տեսնենք այժմ՝ թէ դրա համար ինչպիսի արգելքներ կան: Մեզ առում են, որ նա անկախ չէ: Բայց, դիտնական աշխատութիւնների հիմք դրւած, իդէայի անկախ մշակումը դիմել գեղարւեստի անհրաժեշտ պահանջ է: Ասաղ «լուսնի տակ ոչ մի բան նոր չէ» և դերասանութեան ամենամեծ աշխատութիւնների հիմքում էլ պատահում են ամենքին լաւ յայտնի հշմարտութիւններ: Բայց այդ գեղբլչ է, դիմել հին բանգակապործութեան անհասանելի տիպերը գեղարւեստական ստեղծագործութիւն կոչւելու իրաւունքը կորցնում են միայն նրա համար, որ կազմում են Ճնուշդ Հոմերոսի իդէաների: Զէքսպիրը պատմական խրոնիկների մէջ գտաւ Բիչարդ III-ի չարագործութիւնների մասին տեղեկութիւններ: Այդ փաստական նիւթը մշակելով, նա ստեղծեց իր ամենախոշոր և ազդեցիկ տրագէդիաներից մէկը: Հարրիկ ակտեօրը, որանից գար ու կէս առաջ, գտաւ այդ մարգարիտը, որը նոյն ժամանակ տղեղ բէպերտուարների մէջ մոռացութեան էր մատնւած: Զէքսպիրի իդէաներով ներշնչւած նա

մշակեց նրան իր տեսակէտից, բանաստեղծական աշխատութեան մեռած տառերը ներշնչեց մարմնի և արեան մէջ և ցոյց տուաւ հայացած ամբոխին այդ մատչ հոգու բոլոր դաղտնիքը։ Գեղարուեստագէտ Գօդարտը ոգևորուեցաւ Չարրիկի լուծեաներով և հրաշալի նկարի մէջ պատկերացրեց նրան այդ դերում։ Ոչ ոք չի հերքիլ, որ Ջէքսպիրի և Գօգարտի ստեղծագործութիւնները—գեղարուեստական ճշգրիտ աշխատութիւններ են։ Բայց Չարրիկի ստեղծած այդ տիպին աշխատում են գրիել այդպիսի կոչումից։

Ինչո՞ւ համար,—մենք չդիտենք. Նրանք սովորաբար ակնարկում են այն, որ ակտեօրը տորիօրէն ընդօրինակում է կեանքը։ Իդէան տալիս է գրողը, խոշոր իրական տիպերը ակտեօրը վերցնում է իրան շրջապատող իրականութիւնից, այնպէս որ նրա անկախ ստեղծագործութեան համար էլ տեղ չէ մնում։ Սակայն, իսկապէս, ինչի մէջ է կայանում ամեն մի դերարուեստագէտի գործը։ Նոր լուծեաներ գտնելու մէջ։—Ո՛չ, նրա անմիջական նպատակն է իր արուեստի մասնագիտական միջոցներով—ստեղծել, մարմնացնել իդէան և ամբոխին հասկացնել։ Չարրը նրա մէջ չէ, թէ նրա դլխաւոր է ծնունդ առել այդ իդէան, թէ ուրիշից է վոխ առել, այլ նրա մէջ, թէ դեղարուեստագէտը իր իրաւունքի տակ եղած միջոցների օգնութեամբ, այդեօք, կարողացաւ զարթեցնել հասարակ մարդկանց մէջ այն էմոցիաները, որը նա արտադրեց իր սեպհական ուղեղում։ Իսկական ակտեօրը թափանցում է դրամատիկական դլուածքի մէջ, աշխատելով վերաստեղծել իր առաջ ամբողջ գործողութեան։ Նա տեսնում է և լսում պիէսայի կատմութիւնը իր վրայ, կրում է բոլոր մօմէնտները, և ձգելով բոլոր պատահականը, բոլոր անպէտք և աչքի ընկնող նսեմացնող խորթ ու բորդութիւնները, առանձին ընդունակութեան ոյժով, առանձին ստեղծական ձիրքով, որին մենք կոչում ենք տաղանդ, ստեղծում է ամբողջական, դեղարուեստական պատկեր—կենսական և ճշդրիտ, բայց միևնոյն ժամանակ ուռուցկալ, պայծառ։ Ինչու համար նմանութիւնները այսպէս աւելի շատ են, քան թէ ուրիշ դիտութիւնների մէջ։ Մեզ ասում են, որ ակտեօրի նպատակը վարպետութիւնը վաղանցուկ է, նա իր մահկանիզ չետոյ ոչ մի հետք չէ թողնում։ Բայց աշխատհումս չատ տեսանական ոչինչ չկայ, հոյակապ շինութիւնները, մարմարեայ արձանները խորտակւում են ժամանակի ազդեցութեան ներքոյ, և մի՞թէ նրանց խորտակման մոմենտից անմիջապէս չետոյ իրաւունք ունինք ասելու, որ նրանք երբէք գեղարուեստական ստեղծագործութիւններ չէին, իսկ ինչ վերաբերում է տպաւորութեան վաղանցկութեան՝ չիշենք, որ նշանաւոր վարպետների լաւ նկարները լինում են մեր աչքի առաջ շատ կարճ ժամանակով և այդ մեղ չէ խանգարում նրանց դեղարուեստական դեղեցկութեամբ հիանալու, մուղեցից նրա չքնաղ տիպը մեզ հետ տանելու։ Չոմերտի բազոզիան որ մոմենտում ձեռք բերեց դեղարուեստի ստեղծագործութիւն կոչելու իրաւունքը և արդեօք, այն ժամանակ, երբ նա երդում էր իր ունկնդիրների համար, թէ այն ժամանակ միայն, երբ նրանք զրւած էին և ժողովուած ի մի։ Վերջապէս մատնացոյց են անում և այն բանին, որ ակտեօրը դործ ունի առանձին նիւթի հետ, որը ոչ մի դիտութեան մէջ չի պատահում։ Դա, ի հարկէ, ճշմարիտ է, սակայն այդպէս կարելի է մեղադրել նրանցից իւրաքանչիւրին։ Եւ ինչու մարդու անձնաւորութիւնը իր զգայականութեամբ և տպաւորող չատկութեամբ, կարող է դեղարուեստագէտի համար լինել վատ նիւթ, քան թէ դոլեներն ու կատւը, դրչկութիւնը, մարմարը և պիպը»։

Լ.

ԴԵՂԱՐԻՒԵՍՏ

ԹԱՏՐՈՆ, ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ, ՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ

Չինդշաբթի, ամսոյս 16-ին պ. Վրոյրի և Սաեփանեանի բենեֆիսն էր։ Ներկայացրին Մոլլիերի Ագահ պիէսը. պ. Վրոյր կատարում էր ագահի դերը։ Թատրոնը համարեա թէ լիքն էր։ Մենք ամբողջ երեկոյ ամենայն ուշադրութեամբ հետևելով հայ դերասանական ընկ. խմբի այդ խաղին, աւելի և համոզուեցինք, որ այժմեան հայ բեմը անկարող է կրթել ճաշակ. նա միայն կարող է դոհացնել այն հանդիսականին, որ թատրոնի վրայ նայում է սոսկ իբրև մի զուարճութեան։ Մեր այժմեան հայ թատրոնը անկարող է իր արդի կազմակերպութեամբ էստէտիկ բաւականութիւն պատճառել հանդիսականին. նա պէտք է շատանայ՝ եթէ հայ ժողովրդին կարողանում է մի փոքր ծիծաղացնել, զայրացնել, կամ թէ մոտճել տալ։ Բաւական չեն մի երկու լաւ դերասաններ, պէտք են հաւասար ոյժեր։ Մոլլիերի ագահի ներկայացումը մի հանդիսաւոր բննութիւն էր, որ տեսա պ. Վրոյր և տարաբախտաբար փոքր բացառութիւններով, ընդհանրապէս դոհացուցիչ չէր նրա այդ խաղը։ Նա՛ ով տեսել է Մոլլիերի ագահը (Հարպագոն) փոքր ի շատ է լաւ բեմերի վրայ, անշուշտ կըխոստովանի, որ պ. Վրոյրի խաղը շատ թոյլ էր։ Մենք պ. Վրոյրին մեր այժմեան խմբի մէջ առաջնակարգ ոյժերից ենք համարում և ահա ինչու խստապահանջ ենք։

Այդ ներկայացման բեմի վրայ տեսանք և մի օր. Կարապետեան։ Մեզ հետաքրքրեց սրան բեմ բարձրանալու շարժառիթները և տեղեկացանք, որ յարգելի օրիորդի մայրը մի ժամանակ հայ բեմին ծառայելիս է եղել,—ահա և մօր հարազատ գաւակը իր ծնողի շաւղովն է կամեցել ընթանալ։ Խորհուրդ ենք տալիս յարգելի դերասանուհուն փոխել իր ուղին։ Այդ ճանապարհը նրան չէ կարող տանել դափնիների աշխարհը և ոչ Պատնոսի լեռը։

Հրատարակչական բնկերութիւնն էլ այս տարի իր սովորական պարահանդէսը չի տալու և նրա փոխարէն բանկային թատրոնում հայ դերասանական ընկ. ամսոյս 23-ին մի ներկայացում պիտի տայ Չրատ. Ընկ. օպերին

Անցեալ շաբաթ երեկոյեան Թիֆլիսի ժողովարանում Բէդէր քոյրերի նուագահանդէսն էր։ Նշանաւոր նուագածուներին լսելու համար եկել էր Թիֆլիսի բուն երաժշտասէր հասարակութեան մեծամասնութիւնը, բացակայ էր Թիֆլիսի արիստոկրատիան, beau monde, բայց նրանց փոխարէն կային մի քանի տասնեակ անձնաւորութիւններ—ամեն վարձութիւններին միևնոյն էքստազով ներկայ եղողներ։

Բէդէր քոյրերի կատարէալը մի հրաշ-

ւանք, մի սփոփանք, կատարեալ էսթետիկ մի զարճուրթիւն է տալիս։ Զորս համեստ, քնքոյշ մատաղահաս քոյրեր, բոլորն էլ շողկապւած են միմեանց հետ ոչ միայն արիւնով, այլ և տաղանդով, զգացումներով, և մինանման այդ զգացմունքը քնքոյշ կերպով արտայայտող են։ Այդ արտիստիկ դերդաստան անդամները միանման սքանչելի կերպով հմայում են ունկնդիրներին և կարծես նրանց կամայ կամայ փոխադրում են, տանում մի դիւթական գերբնական աշխարհ։

Զնորհալի չորս քոյրերից մեկը՝ Բօզայիան Նադում է դաշնակ, Սոֆին-ջուրթակ, Լոլան՝ այլտ և Էմիլիան՝ վիօլինչել։

Բէդեր քոյրերը կլանիկ ըէպերտուար ունին։ Նրանք դեռ շատ երիտասարդ են, ընդամեն չորս տարի է որ սկսել են Եւրոպայում իրանց արտիստիկ տուրնէները։ Նրանք իրանց ուսումն աւարտել են Բուդապեշտի երաժշտական ճեմարանում նշանաւոր Կոպպէր, Լրէքսէ պրոֆեսորների ղեկավարութեամբ։

Այսօր կիրակի, Բէդեր քոյրերի երկրորդ կոնցերտն է։

—

Այն օրը, երբ Թիֆլիսում ներկայացնում էին արքունական թատրոնում «Տրաւիատա» օպերան և բանկալվնում «Կամելազարդ տիկին» պրամատը, հէնց այդ օրը Պարիզում կնքել էր իր մահկանացուն այդ սլեհների հեղինակ նշանաւոր դրամատուրգ Ալէքսանդր Դիւման։ Թողնելով հետևեալ №-ին Դիւմայի կենսագրութիւնը, պատմենք այն տպաւորութիւնը, որ ստացանք Տրաւիատայի ներկայացման։ Օպերայի հերոսուհի Վիօլէտի դերը կատարում էր տ. Սոկոլովսկայա, տիպարմ երգչուհի, լաւ ձայնով, բոլորովին անճանաչ բեմական արուեստին և այդ բոլորի հետ արտաքին մի այնպիսի կազմուածքի և շարժումների տէր, որ շատ հեռու էր նա Վիօլէտ լինելուց։ Լաւ ձայնը շատ և շատ քիչ է լաւ երգչուհի և դերասանուհի լինելու համար։ Թատրոնը պէտք է կրթէ հանդիսական, բեմը պէտք է օրինակ տայ շնորհաշուք, վայելուչ շարժումներին, կենցաղի։ Տ. Սոկոլովսկայա դեղեցիկ է բեմից դուրս, գուցէ նրա հագուստը, շարժուածքը գեղեցիկ են հասարակ մահկանացուների մէջ, բայց բեմի վրայ նրան տեսնողը կրկին նայել նրա խաղին չի կամենում։ Վիօլէտ, որ մի ղգայուն, սիրող, տանջուող կին է, մի կին որ աշխարհին իր չքնաղ շարժուածքով հմայում է, մի զգայուն սիրտ, որ սիրուց բորբոքում է, փշրուում և վերջը դադարում բաբախելուց։ Սոկոլովսկիի ոչ-ժերից վեր էր պատկերացնել, ուր մնաց շկռայից բոլորովին զուրկ, թէև սիրուն ձայնով արտայայտել այդ վիշտն ու թախիծը։ Խմբի միւս անդամներն ամենայն բարեխղճութեամբ տ. Սոկոլովսկայի աննշերգաշնակ խաղին այլանդակ մտանկիցներ էին.— հետևանքը ստացւեց մի սոսկալի երաժշտական խայտառակութիւն, որին անվերջ ծափահարում էին գաւառներից և Պարսկաստանից ժողոված մի խումբ բէյեր, խանզադաներ և այլն մաշտագիներ, որոնք այդ երեկոյ համեմատաբար մեծ բազմութեամբ թատրոնի շատ սակաւաթիւ հանդիսականների մէջ աչքի էին ընկնում։

Այս շաբաթւայ օպերային ներկայացումներից նորութիւն էին Կարմէն տ. Վիկտորովայի շատ անյաջող խաղով և „Шёсть торжествующей любви“ երաժշ. չարաւելդի։ Այդ երկու ներկայացումներին էլ շատ ժողովուրդ կար թատրոնում։ Չարաւելդի այս օպերան առաջին անգամն են ներկայացնում Թիֆլիսում, նոր պիէս է, սիւժէտը Տուրգենևից։

—

Վրաց շնորհալի դերասանուհին, սեպտեմբ 15-ին իր բենիֆիսին ընտրել էր Ա. Դիւմայի «Կամէլիա-պատրպտիկին» դրամատ և ինքն էլ խաղում էր Մարգարիտի դերը։ Թատրոնում ժողովուրդ շատ կար. թէ տիկին Ալալոա և թէ միւս դերասանները ամեն ջանք գործ էին դրել այդ ներկայացումը յաջող անցկացնելու համար։ Դիւմայի «Կամէլիատղարդ տիկինը» Սարրա-Բերնարի, Դուզէի և սրանց նման արտակարգ տաղանդների ըէպերտուարի մէջն են։

մանր լուրեր

Ռուս. Հ. Գործակալութիւնը հեռագրում է.

—Կ. Պոլիս, 11 նոյեմբերի։ Ադանայի վալին հեռագրում է. «Հէքմէթսերմէն գիւղում, Զաքիր-փաշայի ջանքերի շնորհիւ, հայ ապստամբները ընկճւեցին։ Տեղն ունեցաւ հանդիստաւոր հաշտութիւն»։

Լոնդոն, 11 նոյեմբերի։ «Standard» լրագրին Կ. Պոլսից հեռագրում են նոյեմբերի 9-ից, որ երեկ սուլթանի պալատում գումարւած մինիստրների մեծ խորհուրդը քննում էր պեսպանութիւնների համար նոր պահականաւերի գալը Թոյլ տալու հարցը։ Յոռետեսները պնդում են, որ իբր թէ պալատը դիմադրում է, վախենալով, որպէս զի նոր պահականաւերի գալը ապստամբութիւն չառաջացնի Կ. Պոլսում։

—Կ. Պոլսից, «Times» լրագրի նոյեմբերի 8-ից ստացած տեղեկութիւնների համեմատ, աւստրիական դեսպանը, որպէս դիպլոմատիական կորպուսի աւագագոյնը, առաջինն էր, որ երեկ ֆիրման պահանջեց պահականաւեր Բոսֆոր ներս Թողնելու համար։ Կ. Պոլիս ուղարկւող՝ վեց մեծ պետութիւնների դեսպանների երկրորդ պահականաւերը Բոսֆորում այժմ դտնւող պահականաւերից մեծ չըպէտք է լինեն։ Պայմանաւորւած է, որ բոլոր 12 նաւերի զինւորների ընդհանուր թիւը 1000-ից աւելի չըպէտք է լինի։

—Կ. Պոլիս, 12 նոյեմբերի։ Սուլթանը Թոյլ տւեց բոլոր մեծ պետութիւնների դեսպաններին կրկին մի-մի պահականաւեր կանչել Կ. Պոլիս։

—Առանձին ջանաշաժողով է հիմնւած հսկելու համար այն միջոցների վրայ, որոնք ձեռնարկւում են կարգը վերահաստատելու համար Անատոլիայում։

Կ. Պոլիս, 12 նոյեմբերի։ Այն լուրը, թէ սուլթանը ստորագրել է արդէն մի ֆիրման, որով Թոյլ է տալիս պատերազմական նաւերի անցնելը Դարդանէլի նեղուցով, վաղաժամ է յայտնւում։

—

«Մշակում» կարդում ենք.—

Կիրակի, նոյեմբերի 12-ին, Կարսից ստացանք հետևեալ հեռագիրը,

վերջին դէպքերի մասին Թիւրքաց Հայաստանում։

«Արաբկիրից, Երզնկայից, Բաբերդից սարսափելի լուրեր են հասնում։ Արական սեռի ազգաբնակութեան մեծ մասը ջնջած է։ Չեն խնայել ոչ կանանց, ոչ երեխաներին. մի մասը ազատել է մահմեդականութիւն ընդունելով։ Աւարառութիւնը և կոտորածը կատարել է բաշիբուզուկների, քիւրդերի, լազերի և Թիւրքերի ձեռքով։ Մի քանի տեղերում հայերը ապստամբել են գաղ դրացի մուսուլմանների մօտ։ Ընդդիմացող հայ ապստամբների մասին եղած լուրերը չափազանցրած են։ Ջանֆերանում, Ծալսաօլայում (?), Դալի-Հարայի հովիտում և մի քանի ուրիշ տեղեր հայերը չեն մղել յարձակումը՝ մի քանի օրւայ կռւից յետոյ։ Ազգաբնակութիւնը կոտորում է քաղցածութիւնից, ցրտից։ Էրզրումում սպասւում է երկրորդ կոտորած։ Թիւրք զօրքերը քաշւում և գնում են դէպի Տրապիզոն. մնացած աննշան ոյժերը, ազգաբնակութիւնը զինաթափ անելու պատրւակով կոտորում են պաշտպանուղներին, կողոպտում են բաշիբուզուկների հետ միասին։ Բոլոր հայաբնակ վիլայէթներում ընդհանուր կոտորած է։ Թիւրքերը ոչ մի բանից չեն քաշւում։ Կարս հասան գաղթականներ։ Ձատ Թիւրքեր անցան մեր սահմանը դէպի Էրզրում։ Հայերից կողոպտած գոյքի մի մասը փախցրել են Թիւրքաց սահմանի այս կողմը։ Կոտորածին մասնակցող Թիւրքահպատակ քիւրդերից նրանք, որոնք վիրաւորած են, աշխատում են պատսպարել մեր սահմանագլխի գիւղերի քիւրդերի մօտ»։

—

Հռոմից «Berl. Tageb.» լրագրին գրում են.

«Այստեղ անգլիական դեսպանատան շրջաններում տիրապետում է ոչ-խոսդաղաստիրական տրամադրութիւն։ Ասում են, որ Անգլիան մինչև վերջը կըհասցնի մի անգամ սկսած գործը, ինչ որ էլ պատահի, և եթէ մեւս պետութիւնները նրան չըհետեւեն, այն ժամանակ նա կըգործէ իր ըիսկով։ Տաճկաստանի վիճակը ծանրակշիռ է մանաւանդ նրա համար, որ սուլթանը կորցրել է իր հեղինակութիւնը,— զօրքը այլ ևս նրան չէ հնազանդւում»։

—

Կ. Պոլսի ամերիկական դեսպան Թըրրէլը ներկայացրել է իր կառավարութեանն երկու կարևոր դոկումենտ։ Այդ դոկումէնտներից մինը երեք ամերիկական քարոզիչների կողմից մի հրաւէր է, որով յայտնւում է, թէ կողպատած գաւառներում 250,000 հայեր զրկած են բոլորովին ապրուստի միջոցից, իսկ սպանած քրիստոնեաների թիւը հասնում է 10,000-ի։

—

Առանձի վալին պաշտօնական հեռագրով հայտնում է, որ 200 հայ աւազակներ յարձակւեցին Զէյթունի Բելի և Նարլ մահմեդական գիւղերի վրայ։ Անկարգութիւնները ճնշելու համար ձեռք են առնւած միջոցներ։

—

Մեծ պետութիւնների ծովային զօրաբաժինները քիչ քիչ կուտակւում են նշանակած նաւահանգիստներում։ Տասն և եօթ նաւերից և 9000 մարդ-կանցից բաղկացած անգլիական նաւատորմը, Սէյմուրի հրամանատարութեան տակ, կանգնած է արդէն Սալոնիկում։ Այնտեղ շուտով կըհասնի և իտալական նաւատորմը՝ Աչինի ծովակալի հրամանատարութեան տակ, բաղկացած հինգ նաւերից։ Ֆրանսիական նաւատորմը կըգումարի Պիրէում։ Աւստրօ - ունգարական նաւատորմը դուրս է եկել արդէն Կատարրոյից։ Երկու գերմանական զրահակիր նաւերի վրայ գտնւում են 440 մարդ և շատ լաւ զինւորած են։

—

«Morn. Post»-ի մէջ տպագրած է. «Փոքր-Ասիայի խռովութիւնների պատճառով Տաճկաստանում տեղի ունեցած փոփոխութիւնները ի նկատի ունենալով, սըր Ֆ. Կերրին ստիպած կը լինի Կ. Պոլիս վերադառնալուց յետոյ գործունէութեան ուրիշ միջոց ձեռք առնել։ Չի կարելի սուլթանից և նրա մինիստրներից սպասել, որ նրանք հիմիկւանից սկսեն բէֆորմները։ Հարկադրած պէտք է հրաժարւել սուլթանի վրայ ազդելու մտքից։ Կերրիին տրւած հրահանգները թոյլատրում են յետաձգել բէֆորմները մինչև այն րոպէն, երբ Տաճկաստանը կամբանայ»։

Ռ. Հ. Գ.

—

Կ. Պոլսից «Neue Fr. Presse»-ին հեռագրում են, որ սէրութիւնների համերաշխ գործունէութիւնն ազատել սուլթանին իր շրջապատողների ազդեցութիւնից և նրանցից ճնշւած լինելուց. նա այժմ շատ հնազանդութիւն է ցոյց տալիս եւրոպացիներին։

—

Այնթապում (Կիլիկիայում) արիւնաչղութիւններ են կատարում։ Չալէպն ապստամբել է։ Տաճկական իշխանութիւններն էլ խոստովանում են, որ Զէյթունի հայերի վրայ առաջ չարճակւեցին քրդերը, բայց հայերը յետ մղեցին նրանց։

—

Կ. Պոլսում, պետութիւնների դեսպանները հրահանգներ են ստացել անընդհատ բանակցութիւններ ունենալ իրար հետ, իսկ վտանգի ժամանակ նրանց տրւում է լիազօրութիւն՝ իրանց հպատակներին պաշտպանելու դէպքում։

—

Լրագիրները հաղորդում են, որ տաճկաց բարձրաստիճան պաշտօնեաները դիմել են Կ. Պոլսի հայ խմբագիրներին և խնդրել, որ յայտարարեն իրանց ընթերցողներին հնազանդել օրէնքներին և խաղաղ մնալ։ Մեծ եռանդով աշխատում են հայկական կոմիտէի անդամներին գտնել։ Բայց մինչև այժմ անօգուտ անցան կառավարութեան բոլոր ջանքերը։ Նորերս խուզարկեցին մի հայ գրողի տունն էլ, սակայն ոչինչ չըգտան։ Այդ խուզարկութիւնից յետոյ թէ հեղինակը և նրա կինը Կ. Պոլսից անհետացել են։

Վերջերումս Կ. Պոլսից աքսորել են 300 հոգուց աւելի։

—

Կ. Պոլսից հաղորդում են «Temps» լրագրին իբրև լուր, թէ սուլթանի բարձրագոյն կոմիսար Զաքիր-փաշան նշանակելու է մեծ վէզիր։

—

Սրբազում խռովութիւնների ժամանակ կոտորել են 800 հոգի հայեր և 10 տաճիկներ։

—

Հռոմից հեռագրում են «Berl. Tageb.»-ին, թէ եւրոպական միացեալ նաւատորմիղը կըդրւի անգլիական ծովակալի հրամանատարութեան տակ։ Ամբողջ նաւատորմիղը գնում է Բիզիկի ծովածոցը։

—

Լոնդոնից հեռագրում են նոյեմբերի 6-ից. «Ազանայից հաղորդում են, որ

45,000 արաբներ, զինուած Փարտինի հրացաններով, երեք ճակատամարտում Սանի մէջ, որ Էմէնի նահանգումն է, ջարդել են տաճկական զօրքին։ Տաճիկները թաղնուել են Սանում։

—

Սուլթանը հրամայել է հէս մինչեւ զօրք զինել Մինիստրների այն հարցի վրայ, թէ ո՞րտեղից վերցնել պատճառ անհրաժեշտ միջոցները, սուլթանը պայթացաւ, և մի քանիսը մինիստրներից հրաժարական տուին, սակայն նա չընդունեց նրանց խնդիրը։

—

Տաճկական աղբիւրից հաղորդում են, որ Ուրֆում յարձակուեցին Հալէպի հայ եպիսկոպոսի մի ճառագի վրայ, որը հագնուած էր արաբի ձեւով։ Նրա մօտ գտան մի նամակ ուղղած տեղական եպիսկոպոսին, որից իբր թէ երեւում է, գոյութիւն ունի մի գաղտնի համաձայնութիւն հայ ապստամբների մէջ, որոնք գտնւում են Փոքր-Ասիայում։ Ուրֆայի եպիսկոպոսը այդ նամակով հրաւիրում է ուղարկել Զէյթունի հայերին վառօդ, որի մասին և հայտարարում են, թէ մէկը Ազա անունով կազմակերպել է հայկական զօրք։

—

Կ. Պոլսից հեռագրում են, թէ 130 հազար հոգուց կազմակերպուած զօրքը սերբիացիներ են։

—Սպառազինումը տաճիկ զօրքերի բաւարար կերպով առաջ է տարում։ Ներկայումս արդէն հարիւր վաշտ սպառազինուած է։ Միայն մի քանի ապստամբութիւնները Ասիտիայում և Սիրիայում գործը չեռաձգում են։ Մի քանի խառնակութիւնների ժամանակ, ասացուցեալ, որ զօրքը մասնակցել է դրանց, իսկ այժմ բազմաթիւ տեղեկութիւններ կան, որոնցից երեւում է թէ զօրքը իրան կարգին է պահում և խաղաղութիւնները ժամանակ հանդարտեցնելու է ձգտում

—

Եւրոպական պետութիւնների նաւատորմիղները տաճկական ջրերում գտնւում են ամսպիոն տեղերում, որ հարկաւոր ժամանակ շուտափոյթ օգնութեան հասնեն։ Կ. Պոլսում, ծանր խռովութիւնների ժամանակ, թէ օտարահպատակները և թէ քրիստոնեաները պաշտպանութիւն կրգտնեն Բոսֆորում գտնուած նաւերում։ Պատրիկի դաշնագրութեամբ պետութիւնները (այդ դաշնագիրը ստորագրող) իրաւունք ունէին մի մի նաւ ուղարկել տաճկական ջրերը։

—

«Ռուս. Տ. Գործակ.» հաղորդելով, (նոյեմբերի 6-ից) Պուրսը ցոյս ունի տասն օրից կարգը վերականգնել Փոքր-Ասիայում։

Այդ երեւում է արդէն վերջերս հետզհետէ ստացուած հեռագիրներից, որտեղ նկարագրւում են անթիւ և անհամար խժդժութիւնների մասին մոլեռանդ մուսուլմանի սարրի կողմից։

—

Լոնդոնից հեռագրում են նոյեմբերի 14-ից. «Ասում են, որ պետութիւնները ստորագրել են մի գաղտնի պայմանագրի, որ վերաբերում է նրանց միաբան գործելուն Տաճկաստանի դէմ։ Այդ համաձայնութեան բովանդակութիւնը խիստ գաղտնի է պահւում, երկիւղ կրելով, թէ դրա յայտնելով մահմեդականների մոլեռանդութիւնը կրգրգռւի և ընդհանուր քրիստոնեաների դէմ հալածանք կբսկսւի։ Անդադար լուրեր են տարածւում և այն մասին, թէ մտադիր են Տաճկաստանի գանատան մասերը գրաւել»։

—

Լոնդոնում (նոյեմբ. 20-ին—նոր տոմ.) վեց պետութիւնների դեսպանները մի խորհուրդ կազմեցին, որ մեծ նշանակութիւն ունի։ Պարտք հաւաքել էին Սոլիկբերի հետ արտաքին գործերի մինիստրութեան մէջ։ Ներկայ էր և ամերիկական հիւպատոսը, որը, ինչպէս ենթադրում են, միանում է «եւրոպական կոնցերտին»։

Daily Chronicle

—

«Daily News» ասում է, թէ Անգլիայի դեսպան Կերրին սուլթանի վրայ մի նամակ է տանում, որ պրել է ինքը թագուհին։

—Վիեննա է հասել Կերրին և այցելել է Աւստրօ-Ունգարիայի մինիստր-նախագահ Գոլուխովսկուն։

—

Գերմանական կայսր Վիլհէլմը խորհրդակցել է կանցլերի և արտաքին գործերի մինիստրի հետ, որ վերաբերում է Արեւելեան գործերին և առհասարակ Տաճկաստանի դէմ գործ դրելիք ընդհանուր միջոցներին։ Սրանից չետոյ չընդունել է կայսրը աւստրիական դեսպանին, որին և գոհունակութիւն յայտնեց այն մասին, որ ընդհանուր համաձայնութեան լուր հրաւիրելն իր վրայ առաւ աւստրիական կառավարութիւնը։

—

Գերմանական մի թերթ, «Hamburger Nachrichten» անունով, որ հայտնի է Բիսմարկի օրգանն է համարւում, ասում է. «Ռուսիան չի հրաժարել իր գլխաւոր նպատակից, այն է՝ փակելով Սեւ ծովի մուտքը, վճռել տաճկական խնդիրը և չետոյ նրբել իր ամբողջ ոյժը արեւելեան ասիական գործերին։ Անցան այն օրերը, երբ Անգլիան ամեն հնար ունէր սպառնալու Ռուսիային։ Ոչ Գերմանիան և ոչ Աւստրօ-Ունգարիան չեն համաձայնի իր անգլիացիների համար շաղանակներ հանել ռուսների կրակից։ Իսկ Բերլինից ահա թէ ինչ են գրում «Temps»-ին Գերմանիայի բռնած դիրքի մասին Հայոց հարցի մասին. «Պետական (Գերմանիայի) կանցլերը չանձնարարել հաղորդել մեծ-վէզիրին, որ գերմանական կառավարութիւնը մտադիր է իսկոյն միջոցների դիմել, երբ Տաճկաստանի գերմանացի հպատակների շահերը վտանգի կենթարկուեն»։ Տաճկաստանի արտաքին գործերի մինիստրը անհամակրութեան արժանացաւ այդ օրից, երբ նա չդիմեցաւ Բերլին հաղորդել Հայաստանում մացնելիք բարեփոխութիւնների մասին, և դրա դէմ բողոքում է գերմանական կառավարութիւնը ..

Թէ որանցից որն է անկեղծ, ապագան կըցոյց տայ։

—

«Ռուսաց Տ. գործակատութիւնը» հետագրում է.

Լոնդոն, 14 նոյեմբերի։ Անգլո-Հայկական ընկերութեան նախագահը առաջարկում է մի անմիտ, բայց բնորոշ նախագիծ՝ Տաճկաստանը բաժան-բաժան անելու համար.—Կ. Պոլիսը զրւում է մի յանձնաժողովի կառավարութեան ներքոյ, որի անդամներին նշանակում են վեց մեծ պետութիւնները և Զէյթունցիան. Մեծ-Բրիտանիան ասում է Եղինջտսը և Արաբկիր. Ֆրանսիան՝ Սիրիա և Մեսոպոտամիա. Աւստրիան՝ Անատոլիա, դէպի արեւմուտք Կիզիլ-Իրմակ գետից, որ թափւում է Սեւ ծովը Սինոպից

ուելի պէտք սրևելք. Թուսիան կրսատնսը Անատոլիա՝ Կլոլ-Իրմակից պէտք սրևելք. Խաղխալին րուժին կ'ընկնէր Ալբանիա և Տրիպոլի. Յունաստանը՝ Կրետէ, Կիպրոս, Սպորադեան կղզիները և Զմիւռնիա. Ֆրանկիան սրսում է Բուլղարիային. Պահեպանիան բաժան-բաժան կրլինէր Յունաստանի, Բուլղարիայի մէջ. Կիլիկիան կրդառնար Հայկական անկախ իշխանութիւն:

— Կ. Պոլսից «Times» լրագրին հաղորդում են, որ տաճկաց զորձերը կարգադրելու համար Եւրոպական կոնֆէրէնցիայի գումարելը, այնուհետև դիվանագիտական շրջանների կարծիքով, անխուսափելի է դառնում:

— Բ ե ռ լ ի ն, 13 նոյեմբերի: Համբուրգի մի լրագրի Կ. Պոլսի թղթակիցը հաղորդից. «Գերմանական — կայսրը չէ համակրում ծովային ցոյցին: Այդ յայտարարութիւնը շնորհակալութեամբ է ընդունուել տաճկաց շրջաններում: Սալթանը յայտնեց մինիստրներին, որ պիտէ դնահատել Գերմանիայի դէպի Տաճկաստանը ունեցած բարեհամութեան խոսական զգացմունքները»: Կիսապաշտօնական «Հիւսիսային Գերմանական լրագիրը» յայտնում է, որ այդ լուրը հնարուած է:

Ե. Գուռը ընդունել, որ պետութիւնները իրաւունք ունեն երկրորդ պահականաւեր ուղարկել, բայց կարծում է, որ երկրորդ նաւերի ներկայութիւնը կրզրգռի մահմետական ազգաբնակութիւնը: Այդ բանի մասին հաղորդուած է աւստրօ-ունգարական դեսպանին, որպէս զի դիվանագիտական կորզուսի աւազագոյնին: Ե. Գրան ներկայացուցիչներին արտաքսհամանում պատուիրած է խնդրել պետութիւններից՝ չքակնել երկրորդ պահականաւեր մինչ տալու պահանջի վրայ:

— Լ ո ն դ ո ն, 15 նոյեմբերի: Բերլինից «Ընդհանուր գործակալութեան» տեղեկութիւնների համեմատ, ներկայումս բաւական հիմքեր չկան պետութիւնների կոնֆէրէնցիա գումարել՝ արևելեան գործերի համար:

—

Ֆրանսիական պատգամաւորների մի խումբ այս օրերս նիստ ունէր Տաճկաստանի գործերի պրոբլեմի մասին: Նախագահ Լեմէն խնդրեց պատգամաւոր Լէտուրնէլից բացատրել արևելեան հարցի պրոբլեմները: Լէտուրնէլ, որը առիթ ունէր շատ մանրամասն ուսումնասիրել տաճկայ գործերը իր պիտոմատական ծառայութեան ընթացքում Կոնստանդ, ասել, որ թէպէտ այժմեան ճգնաժամը Տաճկաստանում ուշադրութեան արժանի է, բայց չրպէտք է արտակարգ նշանակութիւն տալ նրան: Նրա կարծիքով, այժմ կարիք չկայ հարցապնդում անել պատգամաւորների ժողովում այդ գործերի մասին: Նիստի վերջը պատգամաւորների այդ խումբը միաձայն վճռից հարցապնդում չանել Տաճկաստանի մասին արտաքին գործերի մինիստրին:

— «Քանի որ Թուսիան և նրա դաշնակից մեւս պետութիւնները,— ասում է Nord լրագիրը—հայկական խնդրում գործում են համերաշխ և Գուռը տրամադիր է լսելու մեծ պետութիւնների խորհուրդները, բնաւ երկիւղ չկայ, որ սալթանի վրայ որևէ անսովոր ճնշումն գործադրւի»: Գալով օսմանեան կայսրութեան բաժանման խնդրին, նոյն թերթի ասելով, Թուսիան թոյլ չի տալ, որ այդպիսի բան լինի և ամենագրական կերպով կրնդդիմադրէ ամեն տոնձգութեան:

—

Աւստրօ-Ունգարիայի արտաքին գործերի մինիստրութեան մշակած ծրագրի մերժումը Թուսիայի կողմից՝ մեծ տպաւորութիւն է թողել Հռոմում: Հռոմի թերթերից շատերը դժգոհութիւնն են յայտնում այն մասին, որ Վիէննայի կաբինետի նախաձեռնութիւնն անաջողութեամբ վերջացաւ:

—

Կ. Պոլսից հասած տեղեկութիւններին նայելով, սալթանի պալատում չուզած դրութեան մէջ են այն տարաձայնութեան համար, որը յայտնում է թէ եւրոպական պետութիւնները սալթանի գահընկեցութիւնը անհրաժեշտ են համարում Տաճկաստանը խորտակումից ազատելու համար: Պալատական կուսակցութիւնը թախանձում է, սալթանին սրբազան պատերազմ հրատարակել:

— Սպասազինումը շատ դանդաղ է առաջ գնում, որովհետև Հարկաւորւած դրամական միջոցները շատ սակաւ են:

—

Անգլիական լրագրները պնդում են, որ հինգ եւրոպական նաւատորմիղները հասաքն են տաճկական ջրերը, անմիջապէս Գրանը տրտիմատում կատաղարիլի և շուտափոյթ պատասխան կրպահանջւի:

—

Սալթանը Սոլիսբուրին ուղղած նամակում խօսք է տալիս, որ ըէֆորմները մոռնելուց յետոյ գնալու է Եւրոպա՝ պետութիւնների հետ խորհրդակցելու:

—

Փոքր-Ասիայում ուսուցչ հիւպատոսները Պետերբուրգից հրահանգներ են ստացել իրանց բոլոր ազդեցութիւնը գործ դնելու խաղաղացնելու քրիստոնեաներին և մասնաւորի հայերին: Հիւպատոսները առանձին հրահանգներ են ստացել նմանապէս, թէ ինչպէս պէտք է վարուեն, ուսուցչ զօրքերի Հայաստան մտնելու դէպքում:

Daily News

—

Սալթանը անելանելի դրութեան մէջ է Անատոլիայի վիճակի մասին: Նոյեմբերի 4-ից ժ. 5-ից ամբողջ գիշերը նա պալատի հեռագրական մեքենայի կողքին նստած անձամբ թելադրում էր հեռագրներ, թէ ինչպէս պէտք է անել խառնակութիւնները վերջացնելու համար:

—Ձաքիր փաշան էրզրումից հեռագրում է, թէ դատի է (!?) ենթարկել քրդական անկանոն հեծալազօրքի առաջնորդ Հուսէյին փաշային՝ հայկական գիւղերը աւերելու համար:

Times

—

Պուս. Հ. Գործակալութիւնը («Վօլֆից») հեռագրում է. «Լուրերին նայելով՝ դեսպանները պրնդում են, որ Ֆիրման տուրք պահանջները խոսիր մտնելու համար:

կասկած չըկայ, որ Գուտն այդ պահանջը կրկատարի»։

—

Կ. Պոլսից Նոյեմբերի 17-ից հաղորդում են.—Իշղրումից հաղորդում են, որ Նոյեմբերի 14-ին կըրկին բանտարկիններ տեղի ունեցան։ Պատանած են 5, վիրաւորած են 7 հոգի։

—Լոնդոնից, 17 Նոյեմբերի.

Ք. Գրան խնդիրքին չրպնդել պահականաւորի թէ մեծացնելու վրայ, պետք թիւնները յայտնեցին, որ հիմքեր չեն տեսնում հրաժարելու այդ պահանջից։

Ռ. Տ. Գ.

Կ. Պոլսից մեզ գրում են. «Անգլիական նաւատորմը Գարղանելի մօտերքը արգելել է մի տաճկական գրահաւորի, որ վրայի գօրքը՝ 7,000 հոգի փոխադրել Կիլիկիա։

Սուլթանը հրամայած է անմիջապէս կարևոր օգնութեան հասնել Կիլիկիայում հայերից յաղթած բանակին. այդ պատճառով արդէն 120 հազար զօրք են ճանապարհ ընկել. մի ամսից հազիւ կարող կըլինեն հասնել Զէյթունն»։

—

Զէյթունի և շրջակայքի ապստամբները Նոյեմբերի 1-ին յարձակուել են քիւրդերի վրայ, կողոպտելով և այրելով շատ տներ։ Այնտեղ ուղարկուած է երկու զօրաբաժին զօրք։

—

Ռուսաց պետական խորհուրդը քննելու է ռուսաց հպատակութիւն ընդունելու խնդիրը։ Պատրուակն կայ սահմանափակել օտարերկրացիների մուտքը Ռուսիա։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Բագու, Մ. Ա. Զրդխանեանք ինչ ժողովի համար էք ասում։ Ցիրաւի, անցեալ կիրակի Վանաց Մայր եկեղեցում Թիֆ. քահանաների ժողով եղել է, որ ս. բեմից այդ քահանաներին կարդացել է նրանց դրամարկղի հաշիւները և այն բարեպաշտ մարդկանց անունների ցուցակը, որ այդ դրամարկղին նւէրներ են տուել։ Ուրիշ ոչինչ տեղեկութիւն մեզ չայտնի չէ։ Չոզեհանգիստը երևի այդ նպատակ ննջեցեալների հոգու համար կըլինէր։ Բացատրեցէք Ձեր հարցն աւելի որոշ և ուրախութեամբ մենք կրհաղորդենք աւելի մանրամասնութիւններ։ Այդ օրը եկեղեցում համարեա աշխարհականներից ոչ ոք չի եղել։

Ն. Նախիջևան. Օր. Գ. Մ. Դուք դարձեալ հարցնում էք թէ որն է վերջին մողը։ Ըզգիտենք Ձեր լաւագը Պարիզի մոդի մասին է, թէ արդի մեր։ Կրկնում ենք մոդը մարդուս ճաշակն է, ժամանակի, եղանակի հետ իր հագուստը, նիստն ու կացը չարմարեցնելը։ Անցեալ երեկոյ օպերայում Ա.. օթեակում մենք նկատեցինք մի օրիորդի, որ շատ ճաշակով զուգած էր։ Հաւատացէք՝ եթէ այդ օրիորդին տեսնէին Պարիզում այդ հագուստի մէջ, հետևեալ օրը նա կունենար հազարաւոր իր տիկիններ։ Այդ երիտասարդ օրիորդը, որին մենք տեսանք Հուգենոտների ներկայացման Բարեգործական Ընկ. օգտին, այսպէս էր հագել։ Կանայք դերիա չալի վարդերի ճաղկներով կարած։ Կարմիր վարդերից իր փշերի հետ դործած մետաքսի լայն գօտի, կորսաժն ու դերիան սև շղարշով ճաճկած, նոյն գոյն երկար ձեռնոցներ, սև մազերը բաց թողած, մինչև համարեա ոտները։ Պարանոցին մի կանաչ ժապաւէն։ Դերիան յունական ձևով։

Պարիզ, պրոֆ. Յ. Գ. Մեր յարգանքը։ Ուրախութեամբ։ Ստացանք և աշխատեցինք։ Ցաւում ենք, որ անկարելի եղաւ, հանդամանքների փոփոխութեան պատճառով հրատարակել ամբողջովին ընդհակառակ կըլինենք, եթէ կանոնաւոր իւրաքանչիւր շաբաթ ստանայինք ֆելիետոններ այդ տեղի գեղարուեստական, գրական աշխարհից։

Լոնդոն. Մ. Անհամբեր սպասում ենք Կիլիկիայի նկարագրութեան։ Զատ շնորհակալ պիտի լինինք, եթէ նկարների հետ ուղարկէք և Կիլիկիայի մանրամասն քարտէզը։ Խնդրում ենք աճապարեցէք։

ԱՂ ԵՒ ԱՂՔ

ԱՆԳԼԻԱԿԱՆ „ՀԱՐՕՅԼԴ“ ՆՈՐ ՕՊԵՐԱՆ

Մէկը ծաղրելով ասաց, որ անգլիական կոմպոզիտորները իրանց օպերաները գրում են ոչ թէ հասարակութեան և մուզիկայի սիրողների համար, այլ թատրոնական արխիւների մկներին... համար, որի իբրև ապացոյց բերեցին անգլիական կոմպոզիտորներից օպերաներից երկար ցուցակ, որոնց պարտիտուրները երկու երեք ներկայացումից յետոյ դարսւում էին արխիւում «յաւիտեանս ժամանակով»։

Արդարև, անգլիական կոմպոզիտորների բանը յաջող չէ գնում, բազմաթիւ նոր օպերաների միջից, որոնք իւրաքանչիւր տարի անգլիական բեմի վրայ են դրւում, շատ քչերը միայն մնում են repertoire-ում, իսկ այդ քչերից մէկը կամ երկուսը միայն բացառութեան համար մուտք են գործում անգլիական սահմաններից դուրս։

Թէ ինչ վիճակ կունենայ «Հարոլդ» նոր օպերան, որ նորերս բեմ էր դրւած Լոնդոնի Կովէնտ-Գարտէնում, նրան էլ վիճակած է արժանանալ թատրոնական արխիւի մկներին, թէ նա բեմի վրայ կըմնայ—այդ ասել առ այժմ դժւար է։ Լոնդոնի լրագիրների գովասանքներին նայելով, նոր օպերան հասարակութիւնից շատ լաւ ընդունելութ, բայց չէ որ նոյնպէս լաւ էին ընդունւած և, անգլիական ուրիշ օպերաները առաջին ներկայացման ժամանակ, սակայն, յետոյ միանգամից «ընկան»։ Նոր օպերան ձայնագրեց Փ. Գ. Կաուէնը, լիբրէտտոն կազմել է սեր Եդւարդ Մալէտը։

ՊԱՐԻԶԻ ՐԷՆԷՍԱՆՍԻ ՆՈՐ ՕՊԵՐԱՆ

Պարիզի Րէնէսանս թատրոնի ամեն մի նորութիւն կազմում է իր տեսակի մի անցք Պարիզի թատերականների շրջաններում։ Այդ նորութիւնների վիճակով, ասենք, մենակ Պարիզի թատերականները չեն որ հետաքրքրւում են, որովհետև Րէնէսանսի բեմում մի որ և է պիէսի ունեցած յաջողութիւնը լրախոսւում է միւս թատրոնի կառավարիչներին տւած պիէսը իսկոյն մտցնել իրանց խնամքին յանձնարարած repertoire-ի մէջ, պատճառ է դառնում թարգմանութեամբ օտար լեզուներով լոյս ընծայւելուն և այլն։ Րէնէսանսի վերջին նորութիւնը՝ Բոստանի «La princesse lointaine» պիէսն է։ Պիէսի հերոսուհին—Տրիպոլի արքայադուստր Մելիսինդն է։ Նրա դերը կատարում է Սարա Բէրնար։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՏԻԳՐԱՆ ՆԱՋԱՐԵԱՆ

Дозв. ценз. Тифлисъ. 18 ноября 1895 г. Типографія И. Мартиросіанца Орбел. ул., д. № 1—2.